



ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն, Тифлисъ, Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերից):

Ցայտարարությունը ընդունվում է ամեն լիզուով:

Ցայտարարությունների համար վճարում են
խրաբանչուր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

«Տարազ» բառակազմությունը. «Ներքին»
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բարեգործական ընկերությունն սա
նկարարական մասնախումբը. Ներքին լուրեր.
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Էրնեստ Բենյամին. Կ. Պոլսի
ուսուցչական ժողովը. Պատմական տեղեկություններ
նրա խոյրապի մասին. Հեռագրեր. ԲՈՐՈՒՄ.
— ՅԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. ԱՂ-
գային մասնաշաղկապ:

«ՏԱՐԱԶ» ԲԱՆԱՍԻՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Տարազ» շաբաթաթերթը (№ 36) ծար-
պիկ բառակազմություններով է պատասխա-
նում «Մշակ» № 105-ի առաջնորդող յո-
ղուածին: Շաբաթաթերթը պնդում է
որ բժշկական Նաւասարդեանի կողմից սա-
նկարարական խմբին տուած Հրահանգում
պատկերված չէ ջրի և հողի յատկու-
թիւնը ուսումնասիրելու, այլ միայն ջրի
և հողի որպիսութիւնն իմանալու:
Ուրեմն, եզրակացնում է պ. Տիգրան Նա-
ւարդեանի օրդանը դրա համար Տարա-
զը չէ ոչ քննիչ, ոչ էլ միակողմ լինելու:
Դրանք կատարելաւ բառակազմութիւնն
են, որոնք որ և է զրական բանական
մէջ ոչ որին պատկ. չեն բերում: Ասեցէք ին-
չուհի ի թէ ձեզ հրահանգ են տալիս իմա-
նալու ջրի ու տեսակից լինելու. կամ
«հողի որպիսութեան» մասին, դա ի՞նչ է
նշանակում... Չէ՞ որ դրանով պահանջում
են ձեզանից, որ դուք որոշէք ջրի և հողի
որպիսութիւնը կամ յատկութիւնը... Զատ-
կութիւնը նշանակում է ՏԵՍՈՒԹԻՒՆ, իսկ որ-
պիսութիւնը ՔԱՇԵՏՈՒՄ, սովորեցնում է մեզ
պ. Նաւարդեանը: Ծառ բարի, ընդունե՛ք
վերջինը, ընդունե՛ք որ բժշ. Նաւասար-
դեանը պատկերել է իր ստեղծագործական
խմբին որոշել ջրի և հողի որպիսութիւնը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՂԳԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԱՐԱՆ

Կան բաներ, որոնց մասին շատ անգամ գրված
է, շատ անգամ խոսված է, որոնց կարեւորութիւնը
ամեն մարդ ինչ թէ շատ հասկանում է, որոնց
դէմ ոչ ոք ոչինչ չունի և, վերջապէս, որոնց ի-
րազորութիւնը ոչ մի մեծ, անյաղթելի դատարու-
թիւն չունի, բայց որոնք մնացել են անիրազոր-
ծելի, լակ ցանկութիւն, ծառայելով իրեն երբեմ-
նակի պատահական խօսակցութեան նիւթ: Այս-
պիսի չիրազորված, բայց ամենակարեւոր բանե-
րից մէկը է հայ ազգային մատենադարանը: Ամ-
բողջ հայութիւնը, ի բաց առեւել Միջինարեւելե-
րի երկու վանքերը՝ Վիեննայում և Վիեննայում,
չունի մի մատենադարան, որտեղ հաւաքված լի-
նէր հայ աղբյուրի ամբողջ հրատարակութիւնը,
տարեկան ընթացքը մի երկու հարիւր կտոր դի-
քը, հաշվով դրանց մէջ և պարբերական հրա-
տարակութիւնները և փոքրիկ տեսարկներն ու
գրքիկները: Այսպիսի մի ազգային լիակատար
մատենադարանի գոյութեան անհրաժեշտութիւնը
ապագայից անհրաժեշտ մի աւելորդ բան է թւում,
այնպիսի այդ հասկանալի, այնպիսի այդ դիւրա-
մատելի և դիւրամբողջելի է ամենքի համար: Բայց
արի տես որ այդ անհրաժեշտ մատենադարանը
գոյութիւն չունի մինչև այսօր: Այս ապացոյց է,
որ ազգային մատենադարանի միտքը, դրա բազ-
մակողմանի կարեւորութիւնը, անհրաժեշտութիւնը,
այսու ամենայնիւ լաւ չէ հասկացված, լաւ չէ
ըզգացված, ապա թէ ոչ, հակառակ դէպքում,
վաղուց այդ իրադրութիւնը լը լինէր:

Էջմիածին, որ ոչինչ չէ ինքնի և ոչինչ չէ
ինքնի ուսման և յատաճաղիմութեան դրո՛ծի:

ԵԱՇԵՏՈՒՄ... Բայց չէ՞ որ ջրի կամ հողի որ-
պիսութիւնն էլ ոչ-մասնագէտը, այսինքն
մի մարդ, որը քննիչս չէ, միակողմ չէ,
անկարող է որոշել, ի թէ միայն ինքն այն
աստիճան ինքնահաւան չէ, որ կարծէր ի
ամեն բան զիտ և ամեն բան կարող է:

Բայց այդ բառակազմութիւնները մէջ
թաղմած է մի շատ միամիտ և կասկե-
նոյն իսկ երեխայական կարծիք, այդ այն
է թէ ջրի որպիսութիւնն որոշելը նշա-
նակում է ասել՝ արդե՞ք ինչ տեսակ ջուր
է գործածում այս կամ այն գիւղը. գետի,
գետակի, աղբիւրի, առուակի, լճակի կամ
հորի ջուրը...

Սակայն գրանից ի՞նչ գուրա եկաւ... Ար-
ժէ՞ արդե՞ք այդ տեսակ աննպատակ հրա-
հանգներ տալ և այդ տեսակ աննպատակ
հրահանգներ կատարել: Ծառ բարի, իմացա՛նք
որ Ա. գիւղում հորի ջուր են գործածում,
իսկ Բ. գիւղում աղբիւրի ջուր. — դրանից
ինչ եզրակացութիւն պիտի հանելը... Ան-
շուշտ այն, որ առաջին գիւղում խօյրա-
յից մեռածների թիւը աւելի շատ եղած
պիտի լինէր, քան երկրորդ գիւղում: Սակայն
հարց ու փորձ անելուց յետոյ՝ յայտնվում
է զիցուք որ հակառակ է եղել. առաջին
գիւղում խօյրայից դիցուք 12 մարդ են
մեռել, իսկ երկրորդում՝ 30 մարդ... Ու-
րեմն ի՞նչ օրուա, որ իմացա՛նք թէ առա-
ջին գիւղում հորի ջուր են գործածում,
իսկ երկրորդում՝ աղբիւրի ջուր, քանի
որ մենք հար չունեցանք որոշելու. ոչ Ա.
գիւղի հորի ջրի որպիսութիւնը, ոչ Բ.
գիւղի աղբիւրի ջրի յատկութիւնը... Ու-
րեմն այդ տեսակ աննպատակ հրահանգներ
տալը՝ մի և նոյն է թէ գրադրել ջուր ձե-
ծելու: Կօճօր առանի բնակիչները միմիայն
հորի ջուր են գործածում, իսկ խօյրայի
ամբողջ տեղակիւնն ժամանակ խօյրայի
ոչ մի դէպք չէ եղել Կօճօրում: Սակայն
յայտնի է, որ հորի ջուրը անողջարար

համար, դռնէլով իր դուռ եկամուտները գրեթէ
կէտը ձեւաբանի պահպանութեանը, անշուշտ չէր
ըլտայ մի փոքր գումար, մի փոքր մշտական
ծախս ազգային կանոնադր մատենադարանի ունե-
նալու համար, ի թէ միայն երկուր ժամանակ ու-
սումնադրական կամ ուսումնական գործերի դե-
լուս կանգնած մարդիկ հասկանային, զբաղնել
տային, պահանջին այդ մատենադարանի անհրաժե-
շտութիւնը չափազանց կարեւորութիւնը և ան-
յիտաճաղելի լինելը:

Էջմիածին վանքը տպագրված գրքերի մի հա-
շարեան մատենադարան ունի, որտեղ մի քանի
հարիւր կտոր հին հրատարակութիւններ կան և
տարեկան էլ մի քանի տասնեակ կտոր պատահա-
կան և ընծայ ուղարկված գրքեր են մտնում:
Աւելի հարուստ է ձեմարանը մատենադարանը.
Խաչքա միմիայն տպագրված գրքերի մասին է.
որի հիմք են կաղմել Այվազեան արքեպիսկոպոս-
տի տեսութեան օրով՝ խալիպեան դպրոցի գրա-
դարանի մնացորդները և յետոյ՝ Սանատարեանի
գրադարանի մնացորդները: Բայց թէ
ուրիշներ ընծայարեւութիւնները, այլ և վա-
րէկեան գրած մի քանի հատորները: Բայց թէ
որչաւի պակասաւոր են այդ մատենադարանները,
որչաւի թիւեր և անկարող բաւարարութիւն տալու
նոյն իսկ ամենաշատաւոր պահանջներին, այդ
բանին մենք կարող ենք վկայել անձամբ փորձն
առած լինելով և իբրեւ անպատեղ առաջ կը բե-
րենք հետեւեալ մի քանի ուշադրութեան արժանի
խորհրդութիւնները:

Մեզ անհար եղաւ Էջմիածնում գտնել նոյն
իսկ վանքի տպարանում հրատարակված Զաքարիա
սարկաւազի պատմութիւնը՝ ձեմարանի մատենա-
դարանում չկար (վերջին հինգ տարիներս, երբ
են գտնվում էի Էջմիածնում) Գարագաշեանի փն-
հակա հայոց պատմութիւնը, որի մասին նոյն
իսկ ձեմարանի ուսումնաւորտ ուսանողները գա-
ղափար չունէին: ձեմարանում չը կային մինչև

չէ... Ի՞նչ չհանգիւնք այդ դատարկ տեղե-
կութիւնները, քանի որ չը հաւաքօտեցնէր
քննիչայէս Կօճօրի հորի ջուրը...

Ուրեմն առանց ջրի յատկութիւնը, կամ
ի թէ ուղում էք որպիսութիւնն ուսումնա-
սիրելու մենք ոչինչ դրական, կամ գործնա-
կան եզրակացութեան չենք էլ հասնի և
մեր բոլոր, մանաւանդ գիւղացիներին ուղ-
ղած հարց ու փորձերը՝ կը լինեն ոչինչ
ուսումնական արժէք չունեցող, դատարկ տե-
ղեկութիւնների աննպատակ հաւաքածու:

Իսկ «Տարազի» այն տեսակետի հետ
մենք կատարեալապէս համահայն ենք, թէ
միևնդու ոչ քննիչ կար, ոչ էլ միևնրաջ-
ղիւս, մեր պարզը շատ լաւ գիտէին որ-
տեղ է աւագը, որտեղ է կիրը, որտեղ է
կաւը, մեր բրուանները շատ լաւ գիտէին
որտեղ է գտնվում կաւը, որտեղ գիւ իրա-
նից կաւի ամաններ շինեն: Միայն այդ տե-
սակ հմտութիւն, կը պատասխանէր մենք
«Տարազին», անուանելով էլ է միւլիւրի ա-
կան հմտութիւն, կոյր, անգիտակցական
փորձառութեան վրա և ոչ թէ ուսումնա-
կան ծիղը մեթօնների վրա հիմնված հմ-
տութիւն: Եւ նոյն բրուան, որը շատ լաւ
գիտէ թէ իր անձնական փորձառութեանը
և թէ այն պատճառով որ իր հայրերը նը-
րան աւանդել են թէ իրանց գիւղից ոչ
հետո գտնվող բլրակի հողը կաւային է,
փորձեցէք տեղափոխել իր գիւղից մի հա-
լիւր վերաւ հեռավորութեան վրա. —
նոյն փորձված բրուան անկարող կը գտնվի
նոր տեղում ջրից կաւային հողը ուրիշ
բաղադրութիւն ունեցող հողից:

Դրա մէջն է ահագին տարբերութիւնը
գիտութեան և էմպիրիական փորձառու-
թեան մէջ:
«Տարազի» յօդուածը լի է տրամաբանա-
կան մարդարեաներով, պ. Տիգրան Նաւա-
րդեանը կարծում է թէ՛ որովհետեւ հինգ-
ամեայ դասընթացի առաջին երկու տա-
նորում Զարեաններին վերջին հրատարակութիւն
ները, օրինակ՝ Թարգմանական Մատենադարանի
պատմութիւնը: Ոչ մի պարբերական հրատարա-
կութեան կատարեալ ժողովածու չը կայ ոչ վա-
րէն և ոչ ձեմարանում: Ինձ անհար եղաւ ձեռք
բերել «Կաղմակայի» մի քանի հատորները, «Կաղ-
մակայի», որն Էջմիածնում ամենից շատ ստացվող
հրատարակութիւններից մէկն էր: Վերջապէս,
անհար եղաւ ինձ դռնել վանքում, տպարանում
կամ ձեմարանում մեր պարտադիր «Սարգստի»
հատորներից մէկը, կարծեմ 1979 թվականը: Եւ
այսպէս կարելի էր անվերջ շարել օրինակները:

Բայց այս քիչը կարծեմ արդէն շատ բաւական
է ցոյց տալու համար մեր վանքի մատենադարան-
ների դրութիւնը և վիճակը: Եւ այս բանում, իմ
կարծիքով, վանքը մեղաւոր չէ, մեղաւոր է ձեմա-
րանը: Էջմիածնի մի վարչական կենտրոն է բազ-
մաթիւ և բազմակողմանի հոգսերով ծանրաբեռն-
ված: Միաբանութեան մէջ գրականութեանը քի-
չաղիւթների թիւը շատ քիչ է և այդ քիչն էլ դա-
նազան վարչական պաշտօններով ծանրաբեռնված
մարդիկ են: Միայն անտեղեկներն են, որ կար-
ծում են թէ Էջմիածնում կան պարագայ-սարգս-
տեան միաբաններ, որոնք ոչ մի դրամուք չու-
նենալով՝ ազատ ժամանակ շատ ունեն այս կամ
այն դրական դրամուքը նուրբիլու: Միևնդու ձե-
մարանի ուսուցչական խմբի և վարչական
պարտքն է անպատեղ հոգալ գտնել այսուհետեւ
մի տպագրեալ գրքերի կանոնադր և լիակատար
մատենադարան ունենալու մասին: Ինձ մինչև ան-
գամ անըմբռնելի է թւում, թէ ինչպէս հնարաւոր
է եղել մինչև այժմ ձեմարանում անցնել հայոց
գրականութեան պատմութիւն, հայոց պատմու-
թիւն կամ չհայ եկեղեցական պատմութիւն, այն
չափով ինձ չափով որ այդ անհրաժեշտ է անցնել
ձեմարանում, և այլ այսպիսի առարկաներ, ա-
ռանց լիակատար մատենադարանի:

Ինչ ամեն բժիշկ բնագիտութիւն (Ֆիզիկա,
քիմիա, միներալոգիա և այլն) է սովորել
ուրեմն նա կարող է և քննիչս և միևն-
րաջող և այն համարվել... Եթէ այդպէս
լինէր, էլ ի՞նչ հարկաւոր կը լինէին եւրօ-
պական համալսարանների դուռ բնագիտա-
կան ֆակուլտետները, էլ ի՞նչ հարկաւոր
կը լինէին քիմիայի և միներալոգիայի մաս-
նագէտները... Աւելի լաւ չէր լինի ֆակիւ-
այդ բաժնիները, վերջ տալ այդ աննպա-
տակ մատնադրութիւններին, քանի որ
բժիշկները ամեն բան կարող են իմանալ...
Սակայն դրա համար Տիգրան Նաւարդեան-
ցին չէ կարելի մեղադրել. նա տեսնում է
որ մեր բժիշկները ամեն բան գիտեն, ամեն
բանում մասնագէտ են, ուրեմն, մտածում է
նա, ինչի քիմիա ու միներալոգիա էլ չի-
մանային այդ ամենագէտները: Եւ իրաւ նա
տեսնում է, զիցուք, որ մի բժիշկ, որը ի-
րան մասնագէտ վերաբոյժ է յայտնում, մի
և նոյն ժամանակ յայտնում է որ մասնա-
գէտ է և ներքին հիւանդութիւններում,
մասնագէտ է և ակնաճիլ ցուերում, մաս-
նագէտ է և աչքի ցուերում, բայց արա-
նից յայտնում է թէ սիֆիլիսն էլ է բժշ-
կում, և վերջ ի վերջոյ յայտնում է թէ
մասնագիտաբար ուսումնասիրել է և միևն-
րապէս ջրերի բժշկական յատկութիւնն
էր... Այդ բոլոր հրահանգներ տեսնում է պ.
Տիգրան Նաւարդեանը և միամտաբար ա-
սում է, ի թէ մարդ կարող է իրարից այդ-
քան տարբեր ծիւղեր մասնագիտաբար
ուսումնասիրած լինել, որոնցից իւրաքանչիւ-
ր ուսումնասիրութիւններ եւրօպայցին իր ամ-
բողջ կեանքն է նուիրում. — ապա ինչի նոյն
բազմադէտ մարդը, որը միաժամանակ և
վերաբոյժ է, և ներքին հիւանդութիւնների
բժիշկ է, և ակնաբոյժ է, և ակնաճիւրդ է,
և սիֆիլիսաբոյժ է, և բայնէօթոլ է, ի՞նչի
նոյն բազմադէտ չէ կարող մի և նոյն ժա-
մանակ և քննիչս, և միներալոգ, և գուցէ,

Հայ բազմաթիւ ուսանողները, որ օտարադի-
բարձրագոյն դպրոցներում յաջողութեամբ աւար-
տելով իրանց ուսումը և վերադառնալով հայրե-
նիք մեծ մասամբ մնում են անդործ, մոտանալով
նոյն իսկ իրանց տոլորածը և չարտադրելով որ և
է լուրջ դրական-ուսումնական աշխատանք, գը-
րաւորապէս մատենադարանների բազակայութեան
պատճառով է, որ այդպէս մասնվում են ծուլու-
թեան և անդործ մոտացութեան:

Մեր ձեմարանի ուսանողները՝ աւարտելով
դասընթացը դռնակալի էր որ ոչ միայն իր հետ
տանէր յայտնի գիտական պաշար, այլ և ինքնու-
րոյն աշխատելու ընդունակութիւն և դրական
աշխատութեան սէր, որն անկարելի է ձեռք բե-
րել առանց կանոնաւոր և հարուստ մատենադա-
րանի: Նմանապէս ինձ թւում է, թէ անկարելի է
մասնաւորապէս հայկական աւարտականի կանոնա-
ւոր և բազմակողմանի դասաւանդումը, առանց մի
այդպիսի մատենադարանի:

Այս պահանջներին պէտք է մի դոնացում տալ
և չուտափոյթ ունենալ մի ազգային հարուստ
մատենադարան՝ ձեմարանի վարչութեան հոկողու-
թեան տակ: Այդ մատենադարանում պէտք է լի-
նեն անպատճառ, և բաւցի լինել ու՛ց՝ պէ՛տք
է պահպանվել և նա աւելի անաղարտ, հայերէն լեզ-
ուով հրատարակված բոլոր գրքերն ու պարբերա-
կան թերթերը: Նոյնպէս պէտք է ձեռք բերվին
մինչև այժմ հրատարակվածներից ինչ որ չը կայ
կամ պակաս է: Այլ և այն բոլորը, ինչ որ հրա-
տարակվում է օտար լեզուներով՝ հայերի մասին:
Այս գրքերը պէտք է լինեն մատենադարանի հիմ-
նական մասը, որն անհրաժեշտ է ունենալ պար-
տադիր կերպով: Մի և նոյն գրքից երկու օրինա-
կից աւելի չը պահել, որ մատենադարանը մի և
բան ոչ չը դառնայ: Նաև նպատակադարմար եմ
գտնում՝ վանքի տպագրեալ գրքերի մատենադարա-
նը միայն ձեմարանի մատենադարանի հետ, եր-

Միաբան

կան մարդ, որպէս լաւ աստուածաբան և օրինակելի աղբիւրաբանութիւնները թափանցանքներով վարձատրեցին երկարի էր և նրան է պարտական ուստադան եկեղեցին որ կոչվաւ և Անդրկովկասում եկեղեցական գործերը բարեկարգվեցան: Հանգուցեալ խիղորը ճշմարիտ միսիոնարական ոգի ունէր և իմացաւ տարածել ըրիստոնէութիւնը երկրի մի քանի լեռնաշղթան, վայրենի ցեղերի մէջ: Արքայան խիղորը շատ լաւ էր վերաբերվում դէպի հայերը և վերին աստիճանի բարեկամական յարաբերութիւններ ունէր երջանակայեցատեղ Ներսէս V-ի հետ: Արքայան խիղորը ինչպէս վկայում են ծերերը, միշտ մեծ գովասանքով էր խօսում հայերի և հայ եկեղեցու մասին, և թիֆլիս եղած ժամանակ միշտ ամենախիղոր յարաբերութիւններ էր պահպանում քաղաքի հայ հասարակութեան հետ:

Մեզ ուղարկված է թիֆլիսի ուստիականպետի կողմից մի ամենաբանական հաշիւ ճիշտութեան և հաշարանի մասին, որից քաղում ենք մի քանի տեղեկութիւններ: Քաղաքում հիմնված 16 թէյսաներից 6-ը պահվում էին հասարակական հանդիմանութիւններով, որոնք հաւաքվում էին ուստիականպետի մօտ: Հաւաքված է եղել ընդամենը 5,520 թուրք 14 կոպէկ, բայց իրենցինքնով ստացած նուէրներից: Վեց թէյսանում վրա ծախսվել է 3,493 թ. 85 կ. իսկ հաշարանի վրա 1,662 թ. 81 կոպէկ: Ընդամենը ծախսված է 5,265 թ. 66 կոպէկ, և մնում է մնացորդը դրամով՝ 263 թ. 48 կ.:

ԹԱԽԻՉԻՅ մեզ գրում են, որ Ստեփան Լալիկոյան Միխայիլիան վախճանվելով թողել է մի պատկանելի գումար: Հարցորդելով այդ տեղեկութիւնը թղթակցիցը առաջարկում է էլմիամին հոգեւոր բարձր իշխանութեան, չուստիայի կարգադրութիւնն անել, որպէս զի հանգուցեալի սկիսականութիւնն անցնի եկեղեցու ձեռքը, փոխանակ մասնաւոր անձանց սեփականութիւն դառնալու:

Կ. Պօլսից գրում են, որ հայոց պատրիարքարանի մէջ կազմված է մի յանձնաժողով՝ հայոց կաթողիկոսին ընդունելու համար պատրաստութիւններ տեսնելու:

Նորերս թիֆլիսում փակվեց օր. Ս. Արղիշիանի հանրամատչելի դրամաբան, և ինչպէս երևում է հիմնադրի տուած տեղեկութիւններից, նա մտադիր է այդ դրամաբանը նուիրել մի գաւառական քաղաքին: Ի նկատի ունենալով այդ, կարաի հայոց երկրաստորներն մի խումբ ջերմ ցանկութիւն է ցայտնում, որ վրադարձնէ (զեթ ժամանաւորապէս) տեղափոխվի Կարս: Ուր մեծ կարել է հզօղելու: Յստիակ է, որ իրադրութի երկրաստորներն համակրելի փախաղը:

Մեզ գրում են ԱԼԷԲԱՍԻԴՈՊՈԼԻՅ, որ Արշաղի կարգադրութեանը Ալեքսանդրօպօլի յաջորդ Դարեան վարդապետ Սաթեմեան հեռացրած է իր այգիման պաշտօնից:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՐԵՆԵՍ ԲՆԱՆ

Հեռագիրը գումար համարաւոր գիտնական Բենանի, Ֆրանսիայի ճեմարանի ամանաներից մի: Նի մաշը: Երեսու Բենան յայտնի էր իւրեւ փիլիսոփայ-ֆիլոսոփ և կրթիկ: Նա ծնվեց 1823 թ. փետրվարի 27-ին (սուրբն և՛ 70 տարեկան էր) Ֆրանսիայի Կոմ-դը-Նոր դաւառում և ծնողների կողմից նշանակվեց հօգևոր կուլում ընդունելու: Ուստի ամանի հասակում բերվեց Պարիզ, և երբ դաստիարակները նկատեցին, նրան յանձնեցին Ս. Միլլիսի սեմինարիան՝ բարձր աստուածաբանութեան կուրսերը լսելու: Այդ ժամանակ նա ձիւղը ցայց տուեց լեզուների և փիլիսոփայութեան ուսումնասիրութեան մէջ և սկսեց սովորել երայեւրէն, արաբերէն և ասորերէն: Բայց որովհետեւ իր մօթի անկախութիւնը չէր հաշտվում քահանային վաղեմ մտքի որակութեան հետ, նա թողեց հոգևոր դպրոցը և սկսեց ամանաւոր ուսում ստանալ: 1845 թ. վրա նա հրատարակեց «Սեմիտական լեզուների բաղադրական սխալմաները և ընդհանուր պատմութիւնը», որի համար նա վճարեց լեզուաբանական մրցանակ ստացաւ: 1849 թ. վրա

արձանագրութիւնների և բանասիրական ճեմարանի կողմից նրան յանձնվեց մի դրամական միսիոնար կատարելու խաղաղութիւնը: և այդ ճանապարհորդութիւնից յետոյ՝ նա գրեց Ալեքսէս փիլիսոփայի վրա իր յայտնի հետազոտութիւնը, որը հրատարակեց 1853 թ. վրա: 1856 թ. վրա նա ընտրվեց անդամ այդ ճեմարանի: 1860 թ. վրա նա դիտարկեց նպատակով ուղարկվեց Սերիա և ստացաւ Legion d'Honneur-ի պատուանշանը: Այդ թ. վրա նա ամուսնացաւ Նիկոլէ Դեֆֆլէրի աղջկայ հետ: Բենանի անունը հուշակոչը նրա հուշակաւոր «Կեանք Յիսուսի» (Vie de Jesus) գիրքն է, որը նա հրատարակեց 1863 թ. վրա և որի պատճառով նա բանադրվեց հոգևորականութիւնից: Այդ հեղինակութեան աւելումը գրված նրան ջատագովող կամ հերքող գրքերի, բոլորէրների թիւը այնքան շատ է, որ մի ամբողջ գրատուն կարելի է կազմել: Բայց այդ գրութեանց, նա ունի ուրիշ բազմաթիւ աշխատութիւններ՝ կրօնական, փիլիսոփայական և բարոյական բովանդակութեամբ: Նա ընտրվեց Ֆրանսիայի ազգային ճեմարանի անդամ, կամ ինչպէս ասում են՝ արժանացաւ ամանաների տաճարը մտնելու:

Կ. ՊՈԼՍԻ ՌԵՍՈՐՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՐ

Կ. Պօլսի հայ լրագրիները հետեւեալն են հաղորդում այնտեղ գումարված հայոց ուսուցիչների ժողովի չորրորդ նիստի մասին. «Չորրորդ նիստի օրակարգի խնդիրը հետեւեալն էր. «Մեր մէջ ամանակաւորական մարմին կազմութիւնը կը պատասխանէ ճշմարիտ մի կրթութեան պահանջներին, և եթէ ոչ՝ ինչ դարձան հայկաւոր է: Ուսուցիչներն մին, պ. ձերմակեան դաւառական վարժարանների կազմակերպութեան վրա ընդարձակ տեսութիւններ արեւ. պ. Մարկեան, իւր դարձան ուսուցչական մարմին թերութեան՝ առաջարկեց այլ և այլ միջոցներ. կրթութեան կեդրոնացում, մանկավարժական թերթ ու թանգարան և ուսուցչական ժողովներ: Պ. Պ. Պէրպէրեան ալ կրթութեան կեդրոնացման դարձարարը ջատագովեց և իր տեսութիւն ժողովը ընդունելով՝ հետեւեալ իր ճան արտայայտեց, որ ասել է եւս ուսուցիչների փոփոխման անօրինութիւններն ըստ կարի մի կեդրոնէ որոշուին և չը թողուին թաղային կամ տեղական վարչութիւնների քահանայութեան, նոյնպէս և ուսուցիչներին հաստատուն թոշակ տրուի, իրանց արժանիքի համեմատ վարձատրութիւն և հանգստեան թոշակ տեսնուի:»

Հետաքրքրական է իմանալ, որքեք Ուսումնական խորհուրդը պէտք է աշխատէ իրազօրծել ուսուցիչների չօշափած գեղեցիկ մտքերը, թէ դրանք պէտք է մնան մեռած տաւեր ժողովի արձանագրութիւնների մէջ:

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՈԼԵՐԱՅԻ ՄԱՆՈՒՆ

Ի նկատի ունենալով խօլէրայի մուտքը Ֆրանսիա, աւելորդ չեմք համարում կարճատև պատմից Ֆրանսիայի խօլէրայի պատմութիւնը, որից ընկերցորդ պարզ կը տեսնէ, թէ որքան խօլէրան կորցրել է իր ոյժն արևմտեան Եւրոպայի մի երկրում:

Խօլէրայի առաջին համաճարակն երեացել է Ֆրանսիայում 1832 թ. ապրիլին, իսկ սկսվել է 1815-ին Գանդի ափերում: Նա կամայականապէս առաջ է գալիս ծովերի ու գետերի ափերով, զորքերի և քաղաքների մէջ կոտորածներ անելով: Անդի մտեցրեալ, 1817 թ. նա համարեալ ոչ չէր չափում է Հաստիսի գոգքը, մի քանի օրվայ ընթացքում տանելով 10 հազար զինուորացի 7 հազարը 1821 թ. նա մտնում է Պարսկաստան: 1823-ին երևում է Կասպեան ծովի երկրում: Կոտորածներ անելով 1821 թ. Ուսումնական մէջ, խօլէրան մտնում է Լեհաստան, Ունգարիա, Բալտիկի ծովի երկրքը: Այստեղից նա անցնում է Անգլիա և յետոյ Պարիզ 1832 թ. յունիսի 6-ին:

Հինգ օրվայ ընթացքում 300 հոգի հիւանդանում են: Ապրիլի 9-ին մեռնողների թիւն ամենամեծն է լինում, այդ օրը մեռնում են 814 մարդ: Խօլէրային համաճարակը տեսում է մայրաքաղաքի մէջ 6 ամիս և տանում է 18402 զոհ: Այդ ժամանակներում Պարիզի բնակիչները 945,698 հոգուց աւել չէին, ուսումն 1000 մարդկանցից մեռնում են 23-ը:

Վախն ամենքին բռնել էր: Հարուստ մարդիկ,

քաղաքային վարչութիւն, պատգամաւորներ՝ քաղաքից փախչում էին, ժողովրդին թողնելով դարհուրանքի մէջ: Մարդիկ հաւաքվում էին հիւանդանոցների տնջև, ուր մեռնում էին իրանց մերձակոյնները: Մեռնողների թիւն այնքան մեծ էր, որ չէին կարողանում բոլորին թաղել, շատերն երկար ժամանակ անթաղ էին մնում և հոսելով, ապականում էին քաղաքը օդը:

Գժված ժողովուրդն ամեն մի խօքի հաւատում էր: Կարծելով թէ այդ հիւանդութիւնն առաջ է գալիս աղբիւրների թունաւորելուց, նա լինել օրէնքին էր ենթարկում կասկածաւոր մարդկանց:

«Աղքատ ու թշուառ թաղերից, դուռն է Լուի Բլան, դուռն էին դալիս կիտամերի մարդկանց խմբեր, որոնց մեայլ հայվածքն ասուելութիւն էր արտայայտում: Ի՞նչ են նրանք վնասում: Ի՞նչ են ուղում: Ոչ ոք չէր իմանում: Միայն գիշատողներն պէս նայում էին քաղաքի վրա և իրար հետ երկար փոխում: Ապանութիւնները յաճախ էին պատահում:»

Անճանաչութիւնները բազմաթիւ էին. աշխատում էին օգնութիւն հասցնել խեղճներին. բայց ժողովրդի թշուառութիւնն աւելի մեծ էր: Պարիզից խօլէրան վարակում է 48 նահանգ: Ամբողջ Ֆրանսիայում մեռնում են 95 հազար հոգի, 134 հազար հիւանդ աղատվում են մահի ճիւղներից:

Ոչ պակաս խիստ է լինում և 1849 թ. ապրիլի համաճարակը: Սա համարեալ մի և նոյն ճանապարհով է գալիս, ինչպէս և առաջինը: Մայիսի 7-ին նա աղբէն Պարիզում է լինում: Այլուրում այդ խօլէրան քիչ մարդ է տանում, բայց յետոյ սկսում է բազմաթիւ կոտորածներ անել: Պարիզում նա 19,184 զոհեր է տանում, ամբողջ Ֆրանսիայում՝ 110 հազար: Իսկ 1853 թ. ապրիլին Պարիզում սպանում է 9 հազար հոգի:

1865 թ. խօլէրան չորրորդ անգամ մտնում է Ֆրանսիա, միայն այս անգամ ուրիշ ճանապարհով: Նա ծնունդ է առնում Մէքսիկայում, որից ուխտաւորները խօլէրան բերում են Ալեքսանդրիա, իսկ այստեղից չորհեալով՝ Մարսել: Տարածվելով հարաւային քաղաքներում, սեպտեմբերի 23-ին նա մտնում է Պարիզ, առանց վարակելու միջին Ֆրանսիան: Մինչև յունիսը մեռնում են 6 հազար հոգի, յուլիսում նա նորից երևում է և դադարում է միայն 1867 թ. յունիսի ամսում:

Գարձեալ Միջերկրական ծովով է, որ խօլէրան մտնում է Ֆրանսիա 1883 թ., բայց այս անգամ նրա տուած վնասները շատ աննշան են լինում:

Պ. Էլլէստոն «North American Review» ամսական ամսագրի մէջ մի հետաքրքիր յօդուած է գրել «Արեւելեան ուխտաւորացութիւն և խօլէրա» վերնագրով (այս յօդուածն արտատպված է Ֆրանսիական թերթերում): Ինչպէս յայտնի է, դուռն է նա, խօլէրայի աղբիւ հայրենիքը: Հնդկաստանն է, Կալիֆոռնիայի մօտերը (Հուր-վար), ուր դալիս են աղբիւն ասուելութեան մօտ կէս միլիոն ուխտաւոր: Բայց ի տարբերակի, կան նմանապէս երկու քաղաք, ուր հաւաքվում են հարիւր հազարաւոր ուխտաւորներ. Մէքսիկայի Խոլա-սանի մայրաքաղաքը, որը դէպ իրան հրաւիրում է ահապին բազմութիւն Աֆղանիստանից, Հնդկաստանից, Կալիֆոռնիայից, Ռիդիֆայից, Մէքսիկայից: խօլէրաները հիւսիսային Աֆրիկայից, Սիւրիայից, Պալէստինայից և այլ երկրներից: Այդ, Բենգալի և Եւրոպայի միջև գտնվում է խօլէրայի երեք թագաւորութիւն: Պ. Էլլէստոն ասում է, թէ Եւրոպան անկարող է կռուել խօլէրայի դէմ այդ երեք տեղերում: Ոչ մի մարդկային ոյժ չէ կարող ոչինչ անել մահմտական ուխտաւորների կեղտոտութիւնը մարբերու, և ջնջելու այն սրբազան ձգտումները, որոնք առաջացնում են այդ ուխտաւորացութիւնները: Եթէ ուղենային առողջապահական կանոններ սարքել վերոյիշեալ տեղերում, առիթնային պահպանել տարրական առողջապահութիւնը, հարկաւոր կը լինէր ամեն մի ուխտաւորի կողքին երկու պահապան դնել, և մինչև անգամ այս դէպքում էլ ոչ մի բարեբար հետեւանքի չէին հասնել:

Հետեւեալ թվանշանները ցոյց են տալիս, որ խօլէրան աւելի կոտորածներ է անում կեղտոտ երկրներում 1883 թ. խօլէրան, 3 ամսվայ ընթացքում, 50 հազար մարդ է տանում Եգիպտոսում: Ֆրանսիայում՝ 1884—1886 թ. ապրիլից մօտաւորապէս 15 հազար մարդ, խաղաղութիւն 50 հազար, Սպանիայում՝ 180 հազար, Մի

ամերիկայի բժիշկ, ինչպէս դործնական եանկի, խօլէրայի վերոյիշեալ վնասները դրամով է հաշուել: Նրա կարծիքով՝ այդ կոտորածներն Եւրոպային 21/2 միլիարդ ֆրանկից աւելի են նստել: Ժընեւ. Բ. Օ.

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐՈՒՐԳ, 19 սեպտեմբերի: Ս. Պետերբուրգի բոլոր—թիֆլիսի և Բուխարյան կալուածական բանկերի գրաւական թղթերը 60/0—1021/4, 50/0—99,87. Թիֆլիսի քաղաքային կրեդիտային ընկերութեան օբլիգացիաները—98:

Կ. ՊՈԼԻՍ, 19 սեպտեմբերի: Բ. Գուրը կազմում է յայտադիր, որի մէջ յայտնում է, որ Թիւրքիան կատարեալապէս յարգում է Բերլինի դաշնագրերը, իւրեւ հիմք այժման քաղաքական կարգի: Ապա Բ. Գուրը հաւատացնում է, որ չէ կամեցել ոչ Բերլինի դաշնագիրը խախտել և ոչ էլ Ռուսաստանին դիպչել: Սօֆիայի օսմանեան կոմիտար Բնչեւ-բէյին հրամայված է՝ բողաքական կատարելութեան լուրջ առաջարկութիւններ անել՝ այն մասին, որ «Աղատութիւն» լրագիրը անձիւղ տեղեկութիւններ է հաղորդել սուլթանի կողմից Ստամբուլում արած ընդունելութեան վերաբերմամբ:

ՊԵՏԵՐՈՒՐԳ, 19 սեպտեմբերի: Ֆինանսների մինիստրի օգնական Տէրնէր նշանակված է սենատոր: Անդրկովկասեան և Անդրկասպեան երկրի ակցիոյային տուրքերի կատարարիչ Մարիով—Նաչանակված է անուղղակի տուրքերի ղեկարարամենտի ղրկկտոր: Պետերբուրգում էպիդեմիան թուլանում է. երէկ հիւանդացան 14, մեռան 3, առողջացան 24. գաւառները եկած լուրերը նոյնպէս զոհացուցիչ են: Օդէսայում սեպտեմբերի 11-ից մինչև 16-ը հիւանդացել են ընդամենը 10, մեռել են 4.—ի նկատի ունենալով, որ սեպտեմբերի 25-ին լրանում է հ. Սերգէյ Բաղդանովսկու մահվան 500-ամայ տարեդարձը, ժողովրդական լուսաւորութեան մինիստրի կարգադրութեամբ այդ օրը պէտք է արձակել աշակերտներին, պարապմունքներից, դպրոցներում կը կատարվեն մաղթանքներ, տեղի կունենան դասախօսութիւններ:

ԽԱՐԿՈՎ, 19 սեպտեմբերի: Խալի գործարանում անդի ունեցած անկարգութեան դրոժի նախահական քննութիւնը աւարտվեց, մեղադրողները, թուով 180 հոգի, կենթարկվին դիւտորական դատաստանի: Նկատելիքնայաւում:

ԲԵՐԼԻՆ, 19 սեպտեմբերի: Չինտորական օրէնքի նախագիծը անցել օրը ներկայացվեց պրուսական մինիստրութեան:

ՎԻԵՆՆԱ, 19 սեպտեմբերի: Այսօր մի քանի աւստրիական օֆիցերներ ձիով ճանապարհ ընկան դէպի Բերլին, վաղը ճանապարհ է ընկնելու մի ուրիշ խումբ: Այսօր երկու օֆիցեր եկան հաւաքման տեղը երկու կաղապային ձիով: Լրագիրներում ասում են, որ այդ արտաքուստ տեղը ձիաները հաղիւ են կարողանալ հաւասար կերպով արշաւել, բայց դրանց տները մեծ յոյս ունեն այդ ձիերի ղեկացկանութեան վրա:

Կ. ՊՈԼԻՍ, 19 սեպտեմբերի: Լոնդոնի թիւրքայ դեռնյան Ռուստէմ-փաշան յայտնեց Լօրդ Բոլդերիին, որ Թիւրքիան պատրաստ է համաձայնել Գրուսմուգ Վալիի դաշնագրի հետ, որը առաջարկում է մարքել Եգիպտոսը անդլական զօրքերից:

ՊԵՏԵՐՈՒՐԳ, 20 սեպտեմբերի: Երէկ տեսում էին ս. սինօդի օրեր-պրոկուրորի օգնական Սաբլերի ծառայութեան 25-ամեակը: Յօրհանարին շնորհակարան շատ բարձրադիր հոգևորական, զինուորական և քաղաքացիական պաշտօնեաներ:

ՊԱՐԻՉ, 20 սեպտեմբերի: Ակադեմիկ Բենան վախճանվեց:

Ս. ՊԵՏԵՐՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Սեպտեմբերի 18-ին			
Լօնդոնի վրա 10 ֆունտ արծի . . .	99 թ. 5 կ.		
Բերլինի վրա 100 մարկ . . .	48 թ. 55 »		
Պարիզի վրա 100 ֆրանկ . . .	39 » 30 »		
Ռալի . . .	արծի է . . .	7 » 92 »	
Մաքսայի կուպոններ . . .	158 »		
Արծաթ . . .	1 » 10 »		
Բորսայի դիվիդենդ . . .	4 » 51/2 %		
Պետ. բանկի 50/0 տոմս 1 շրջանի . . .	103 » 12 »		
— — — — —	2-րդ — . . .	103 »	
— — — — —	3-րդ — . . .	— »	
— — — — —	4-րդ — . . .	— »	
— — — — —	5-րդ — . . .	— »	
— — — — —	6-րդ — . . .	103 » 12 »	
60/0 ոսկեայ ընտաւ . . .	160 » 50 »		

